

- *Օգտապաշտութեան հաշուարկը* («բարոյական թուաբանութիւնը») եւս քննադատութեան նիւթ է, որովհետեւ գիտական հիմք չունի, եւ ինչպէս նշեցինք, կարելի չէ որպէս չափանիշ օգտագործել՝ թէ՛ անհատի (ենթակայի, Subject) եւ թէ միջենթակայական (Intersubjective) առաւելութիւններու ու թերութիւններու պարագային:
- *Օգտապաշտութեան* պարագային, թէեւ ընդհանրապէս ընդունուած են *մարդու արժանապատուութիւնն* (Human Dignity) ու *մարդու հիմնական իրաւունքները* (Human Rights),⁽⁷²⁾ սակայն, գործնականին մէջ, անոնց հաշ-ւոյն, կրնան անտեսումներ յառաջանալ:
- Ընդհանրականացման սկզբունքի կիրառութեան պարագային յաճախ կը հաստատենք, որ *հաւասար բաշխման արդարութիւնը* (լատ.՝ iustitia distributiva) ճիշդ չի գործադրուիր, որովհետեւ միշտ նկատի կ'առնուի *օգուտի* ընդհանուր արդիւնքը. այս պատճառով ալ կարգ մը անհատներ կրնան վնասուիլ, ընդհանուրի շահին համար:
- *Օգտապաշտութեան հիմնաւորումը* եւս կը բախի որոշ դժուարութիւն-ներու: Ժխտականօրէն կը քննադատուի, որ օգտապաշտութիւնը, իր տրա-մաբանական ու գիտական հիմքով բարոյագիտական դրութիւն (System) մը չի կրնար կազմել:



(72) **Մարդու արժանապատուութիւնը** (Human Dignity) եւ **Մարդու հիմնական իրաւունքները** (Human Rights) հասկացութիւններու մասին, տե՛ս յաջորդաբար Մաս – 9, էջ 410 եւ 503: